

**ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՊԱՏՎԱՍՏՈՒՄ
ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

ԱՎԵՐԵՆ- 2017

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 2921 - Ա հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ- 2017

«22» սեպտեմբեր 2017թ. № 2763-Մ

«ՄԱՐԴՈՒ ՊԱՊԻԼՈՍԱԿԻՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ», «ՄԱՐԴՈՒ ՊԱՊԻԼՈՍԱԿԻՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ»

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 7-րդ կետի «Ժբ», 8-րդ կետի «բ», 12-րդ կետի «դ» ենթակետերը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի «2016-2020 թվականների Իմունականխարգելման ազգային ծրագրին, Իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկին, Պատվաստումների ազգային օրացույցին, Իմունականխարգելման ազգային ծրագրի ակնկալվող արդյունքներին և Պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևին հավանություն տալու մասին» թիվ 10 արձանագրային որոշման հավելված 1-ի 42-րդ կետի առաջին ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՎ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների ազգային ուղեցույցը»՝ համաձայն հավելված 1-ի:

2) «Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների և պատվաստանյութերի գրպանի ուղեցույցը»՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում շատ վարակիչ հիվանդություններ կարելի է կանխարգելել պատվաստումների միջոցով՝ իմունականխարգելման ազգային ծրագրի իրականացման շրջանակներում: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներում նպատակային քանակակազմերի 95%-ից ոչ ցածր ընդգրկվածություն, ինչպես ազգային, այնպես էլ՝ տարածաշրջանային մակարդակներում:

Այն վարակիչ հիվանդություններից, որոնք կարելի է կանխարգելել պատվաստումների միջոցով, յուրաքանչյուր տարի մահանում և հաշմանդամ են դառնում հարյուր հազարավոր մարդիկ:

Պատվաստումներն ամենահուսալի միջոցն են այնպիսի վարակիչ հիվանդություններից պաշտպանվելու համար, ինչպիսիք են՝ պոլիոմիելիտը, կարմրուկը, կարմրախտը, դիֆթերիան, փայտացումը, կապույտ հազը, տուբերկուլոզի ծանր ձևերը, հեպատիտ Բ-ն, համաճարակային պարոտիտը, հեմոֆիլուսային Բ տիպի, պնևմակոկային, մենինգակոկային, ռոտավիրուսային և մարդու պապիլոմավիրուսային վարակը:

Պատվաստումային գործընթացն իրականացվում է հետևյալ կարևոր բաղադրիչների համակցությամբ՝ պատվաստումների անվտանգ իրականացում պատվաստվողի համար, անվտանգ պատվաստում կատարողի համար և անվտանգ պատվաստում շրջակա միջավայրի համար:

1. Ներարկումների անվտանգության ապահովում

Պատվաստումների անվտանգ իրականացման նպատակով ԱՀԿ-ն և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը առաջարկում են օգտագործել հինքնարգելափակվող ներարկիչներ՝ ցանկացած տիպի պատվաստումային գործընթացի իրականացման ընթացքում:


2. Պատվաստումային գործընթաց

Մինչև պատվաստանյութի ներարկումը պատվաստվողին բերեք ճիշտ դիրքի.

Քայլ 1. Երեխային նստեցրեք կամ պառկեցրեք մոր ծնկների կամ բարուրասեղանի վրա:

Քայլ 2. Դեռահասների և մեծահասակների դեպքում՝ պատվաստումն իրականացրեք նստած կամ պառկած վիճակում:

Պատվաստումային գործընթացի նախապատրաստում




1. Պատվաստանյութը հանել սառնարանից
2. Ստուգել պիտանելիության ժամկետը և ՊՇՑ-ի վիճակը
3. Նախապատրաստել պատվաստումների համար օժանդակ պարագաները
4. Պատրաստել առաջին օգնության միջոցների հավաքածուն

Արգելվում է դիպչել ասեղի ծայրին

Քայլ 1. Ստուգեք պատվաստանյութի շշիկի/սրվակի ամբողջականությունը, գույնի տեսանելի փոփոխությունը

Քայլ 2. Ասեղը մտցրեք շշիկի/սրվակի մեջ




Ասեղի ծայրը մտցրեք շշիկի պարունակության մեջ: Օդի բշտերից ազատվելու համար ներարկիչի ասեղը չի կարելի շարժել առաջ - հետ:

Քայլ 3. Պատվաստանյութը հավաքեք ներարկիչի մեջ

Քայլ 4. Անհրաժեշտության դեպքում զգուշորեն մխոցը շարժեք դեպի 0,5 մլ նշումը (0,05մլ՝ ԲՑԺ-ի համար): Մխոցը հեղ մի շարժեք

Ներարկման ճիշտ տեխնիկա

<p>ԲՑԺ պատվաստանյութ</p>	<p>Ներարկեք ներմաշկային՝ սովորաբար ձախ բազկի վերին երրորդականում</p>	<p>Ներմաշկային</p> <p>Մաշկ</p> <p>Ենթամաշկ</p> <p>Մկան</p>
<p>Կարմրուկ-կարմրախտ-խոզուկ, Կարմրուկ-կարմրախտ</p>	<p>Ներարկեք ենթամաշկային՝ բազկի դելտայաձև մկանի շրջանում</p>	<p>Ենթամաշկ</p> <p>Մաշկ</p> <p>Ենթամաշկ</p> <p>Մկան</p>

<p>ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ, ԱԴՓ-Մ, Հեպատիտ Բ, ԻՊՊ, ՄՊՊ, Հեպատիտ Ա, Մենինգակոկային /նաև ենթամաշկային՝ ըստ ուղեկցող հրահանգի/, Պնևմակոկային</p>	<p>Ներարկեր միջմկանային՝ ազդրի վերին առաջադրսային մակերեսին/բազկի վերին երրորդականում, խորը միջմկանային</p>	<p>Միջմկանային</p> 
--	---	--

Ներարկումից հետո, ներարկիչն անմիջապես ասեղի հետ միասին նետեք անվտանգ այրման տուփի մեջ:

Երբեք ասեղը մի թողեք շշիկի մեջ: Ծայրադիրը կրկին մի՛ հագցրեք ասեղի վրա


3. Ինչպե՞ս անվտանգ հավաքել և ոչնչացնել օգտագործված պարագաները

ա. Անվտանգ այրման տուփը տեղադրեք պատվաստում իրականացնողի համար հասանելի տեղում: ԱԱՏ-ի վրա գրեք բացման և փակման ամսաթիվը և ժամը:


բ. Յուրաքանչյուր ներարկումից հետո ներարկիչն ասեղի հետ միասին անմիջապես նետեք ԱԱՏ-ի մեջ:

գ. ԱԱՏ-ը լցրեք մինչ «լցված է» գիծը (անգլ.«full»), որը լրիվ ծավալի 3/4-րդ մասն է:

ԱԱՏ-Ն ՄԻ ԼՅՐԵՔ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ



Երբ ԱԱՏ-ն լցվում է ծավալի 3/4-ով , այն փակեք և կնքեք



4. Ինչպե՞ս իրականացնել անվտանգ և արդյունավետ պատվաստումներ

Ստուգեք պատվաստանյութի 22իկը/սրվակը՝ պիտանելիության ժամկետն արդյո՞ք չի անցել, 22իկը/սրվակը վնասված չէ՞, պատվաստանյութն աղտոտված չէ՞:

Եթե	Ապա՝
Շշիկի վրա պիտակը բացակայում է կամ պիտակի նշագրումը պարզ չէ	Պատվաստանյութը մի օգտագործեք
Պիտանելիության ժամկետը	Պատվաստանյութը մի

լրացել է	օգտագործել
Պատվաստանյութի շշկն ունի ճաքեր կամ հոսքեր	Պատվաստանյութը մի օգտագործել
Պատվաստանյութը մասամբ թափվել է	Պատվաստանյութը մի օգտագործել

Որոշելու համար պատվաստանյութն ենթարկվել է արդյո՞ք բարձր ջերմաստիճանի ազդեցության՝ ուշադրություն դարձրեք շշկի/սրվակի վրա եղած զգայորոշիչին (ինդիկատորին):

ИНДИКАТОР НА ФЛАКОНЕ ПОКАЗЫВАЕТ

Внутренний квадрат светлее наружного круга
Если срок годности вакцины не истек, ее можно использовать

Позднее, внутренний квадрат все еще продолжает оставаться светлее круга
Если срок годности вакцины не истек, ее можно использовать

Первый сигнал для уничтожения:
Внутренний квадрат стал одного цвета с наружным кругом
Нельзя использовать вакцину
Поставьте в известность своего руководителя

Позднее: Внутренний квадрат стал темнее наружного круга
Нельзя использовать вакцину
Поставьте в известность руководителя

Շշկի/սրվակի

վրայի զգայորոշիչը ցույց է տալիս՝

Ներսի քառակուսին սվելի բաց է, քան արտաքին շրջանակը: Եթե պատվաստանյութի պիտանելիության ժամկետը չի լրացել, այն կարելի է օգտագործել:

Ավելի ուշ, ներսի քառակուսին շարունակում է մնալ շրջանից բաց: Եթե

ժամկետը չի լրացել, այն կարելի է օգտագործել:

Ոչնչացման առաջին ազդանշանը, եթե՝

Ներսի քառակուսին և արտաքին շրջանակն ունեն նույն գունավորումը: Պատվաստանյութը **չի կարելի** օգտագործել: Տեղյակ պահեք Ձեր ղեկավարությանը:

Ներսի քառակուսին դարձել է ավելի մուգ, քան արտաքին շրջանակը: Պատվաստանյութը **չի կարելի** օգտագործել: Տեղյակ պահեք Ձեր ղեկավարությանը:


Ստուգեք պատվաստանյութերն ենթարկվել են սառեցման

Եթե	Ապա՝
Դուք կասկածում եք, որ ԱԿԴՓ/ՎՀԲ /ՀԻԲ, ԱԴՓ-Մ և հեպ-Բ-ի պատվաստանյութը կարող են սառեցված լինել	Կատարեք ԹԱՓԱՀԱՐՄԱՆ ԹԵՍՏ
ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ, ԱԴՓ-Մ, ԻՊՊ, ՄՊՊ, ՎՀԲ, Պնևմակոկային, Մենինգակոկային, Ռոտավիրուսային պատվաստանյութերը սառեցվել են	Մի՛ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ այդ պատվաստանյութերը

5. Ինչքանո՞վ են պատվաստանյութերը զգայուն տաքացման և սառեցման նկատմամբ

Պատվաստանյութերը կորցնում են իրենց հատկություններն ինչպես տաքացման, այնպես էլ սառեցման դեպքում: Պատվաստանյութերը պետք է պահել +2°C-ից +8°C ջերմաստիճանային պայմաններում:

Պատվաստանյութերի ջերմաստիճանային զգայունությունը



21 | HPV Vaccine Introduction, Module 1 Gardasil™ | 15 September 2017



6. Պատվաստանյութերի անվտանգ վերականգնում

Պատվաստանյութի անվտանգ վերականգնման համար հետևեք հետևյալ կանոններին.

- Օգտագործեք **միայն** այն լուծիչը, որն արտադրողն առաքել է կոնկրետ տվյալ խմբաքանակի չոր նյութի վերականգնման համար:
- Պատվաստանյութը վերականգնեք անգամ այն դեպքում, եթե անհրաժեշտ է պատվաստել նույնիսկ մեկ երեխայի:
- Ամեն անգամ պատվաստանյութը վերականգնելիս օգտագործեք միայն մանրէազերծ ներարկիչ և ասեղ:
- Լուծելու համար նախատեսված ներարկիչներն օգտագործելուց անմիջապես հետո նետեք ԱՍՏ-ի մեջ:
- Ներարկվող դեղաչափի հավաքման համար օգտագործեք ինքնարգելափակվող ներարկիչներ:

- Օգտագործված ներարկիչներն ասեղների հետ միասին նետեք ԱԱՏ-ի մեջ:
- Վերականգնվող պատվաստանյութերը ոչնչացրեք լուծելուց 6 ժամ հետո՝ ըստ պատվաստանյութի հրահանգի:

7. Պատվաստանյութերի պահպանման սառնարանի ջերմաստիճանի մշտադիտարկումն իրականացվում է՝

- Ֆրիջ-Թագ
- Ջերմաչափ
- Ջերմաստիճանի մոնիթորինգի աղյուսակ

ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ FRIDGE-TAG®-Ի ՀԱՄԱՐ

ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ FRIDGE-TAG®-Ի ՀԱՄԱՐ

Մարզ-----		ԲՕԱՍԻԿ-անվանում -----					Սառնարանի համարը-----			
Ամիս և տարի										
Սարքավորումը										
Անաթիվ	Առավոտ	Երեկոյան	▲ °C	Ազդանշանը / OK	Տևողությունը	Սկզբնա տառերը	▼°C	Ազդանշանը / OK	Տևողությունը	Սկզբնա տառերը
.....										
Նշումներ										

8. Սառնարանում ջերմաստիճանի ամենօրյա հսկողություն

Քայլ 1. Սառնարանի ջերմաստիճանի կարգավորիչը տեղադրեք այնպես, որ սառնարանում ջերմաստիճանը պահպանվի $+2^{\circ}\text{C}$ -ից $+8^{\circ}\text{C}$ -ի սահմաններում:

Քայլ 2. Սառցային շղթայի պատասխանատու բուժաշխատողը ստուգում և գրանցում է ջերմաստիճանն ամեն օր՝ առավոտյան և երեկոյան, ներառյալ հանգստյան օրերը:

Առավոտյան՝ երբ գալիս եք աշխատանքի

1) Ստուգեք ընթացիկ ջերմաստիճանը և գրանցեք նրա ցուցանիշները Առավոտ սյունակում:

2) Նայեք, կան արդյոք **այսօր** սյունակում ▲ կամ ▼ նշանները: Եթե այդպիսի նշաններ չկան, դա նշանակում է, որ կեսգիշերից հետո ոչ մի խախտում չի եղել: Եթե կա նշան, ապա դա նշանակում է, որ տազնապի ազդանշան է եղել:

3) Ցանկացած դեպքում սկսեք սեղմել READ կոճակը: Եթե այսօր տազնապի ազդանշան է եղել, նայեք, թե որն է եղել ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանը և նրա տևողությունը, ազդանշանի նշանակությունը հասկանալու համար:

4) Ուսումնասիրեք հետահայաց տվյալների գրանցման ռեժիմը երեկվա համար: ▲ $^{\circ}\text{C}$ սյունակում գրանցեք ջերմաստիճանի բարձր ցուցանիշը, ինչպես նաև կարգավիճակը

(Ազդանշան/OK), այդ ջերմաստիճանի ազդեցության տևողությունը և Ձեր անուն ազգանվան սկզբնատառերը:

5) Եթե այդ առավոտը երկուշաբթի է, շարունակեք ստուգել շաբաթ (-2 օր) և ուրբաթ (-3 օր) օրերի տեղեկատվությունը և գրանցեք այն մոնիթորինգի աղյուսակի համապատասխան սյունակում:

6) Սարքը հետ տեղադրեք սառնարանի մեջ:

7) Եթե կան տազնապի որևէ ազդանշաններ, հետևեք համապատասխան ընթացակարգերին՝ խնդրի լուծման համար:

Երեկոյան՝ աշխատանքից գնալուց առաջ

8) Ստուգեք ընթացիկ ջերմաստիճանը և գրանցեք նրա ցուցանիշները օրվա երկրորդ կես սյունակում:

9) Ստուգեք, կան արդյոք այսօր սյունակում ▲ կամ ▼ նշանները: Եթե այդպիսի նշաններ չկան, դա նշանակում է, որ կեսգիշերից հետո ոչ մի խախտում չի եղել: Եթե կա նշան, ապա դա նշանակում է, որ տազնապի ազդանշան է եղել:

10) Եթե այսօր տազնապի ազդանշան չի եղել վերադարձրեք սարքը սառնարանի մեջ:

11) Եթե այսօր եղել է տազնապի ազդանշան, սեղմեք READ կոճակը և պարզեք գրանցված ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները և դրանց ազդեցության տևողությունը՝ ազդանշանի նշանակությունը հասկանալու համար:

12) Սարքը հետ տեղադրեք սառնարանի մեջ:

13) Եթե կան տազնապի ազդանշաններ, հետևեք

համապատասխան ընթացակարգերին՝ խնդրի լուծման համար:

9. Պատվաստանյութերի պահպանում սառնարանում

- Պատվաստանյութերը, լուծիչները և սառցային տարրերը պետք է պահպանել հատուկ, այդ նպատակի համար նախատեսված սառնարանում և սառցարանում:
- Չի կարելի պատվաստանյութի հետ միասին նույն սառնարանում պահել այլ դեղորայք, քսուքներ, արյան շիճուկի նմուշներ:
- Չի կարելի պատվաստանյութերի հետ միասին պահել սննդամթերք նույն սառնարանում:
- Չի կարելի սառնարանի դուռը հաճախ բացել, քանի որ այն սառնարանի ներսում բարձրացնում է ջերմաստիճանը:
- Մի պահեք սառնարանում պիտանելիության ժամկետն անցած պատվաստանյութեր, ինչպես նաև պատվաստանյութեր, որոնց վրայի զգայորոշիչը ցույց է տալիս, որ դրանք ենթակա են ոչնչացման:
- Մի պահեք նաև վերականգնված պատվաստանյութեր, եթե լուծելու պահից անցել է 6 ժամից ավելի՝ ըստ պատվաստանյութի պահպանման հրահանգի:

10. Պատվաստումային գործընթացի ընթացքում պետք է պահպանել անվտանգության կանոնները, պատահական ծակոցներից խուսափելու համար:

11. Ինչպե՞ս կանխատեսել ասեղների պատահական ծակոցները

- ԱԱՏ-ը տեղավորեք ներարկում կատարող բուժաշխատողի մոտ այնպես, որ պատվաստում կատարողը կարողանա օգտագործված պարագաները ներարկումից հետո անմիջապես նետի ԱԱՏ:

- Ներարկիչը ձեռքով մի առանձնացրեք ասեղներից:

- Ասեղով ներարկիչները մի տեղափոխեք և մի տեղադրեք մի տեղից մյուսը:

- Ծայրադիրը կրկին մի հազցրեք ասեղին:

- Պատվաստանյութը հավաքեք ներարկիչի մեջ, կատարեք ներարկումը և օգտագործած պարագաները նետեք ԱԱՏ-ի մեջ՝ առանց միջանկյալ փուլերի, օրինակ՝ ներարկիչների դասավորում ինչ որ մակերեսի վրա:


- ԱԱՏ-ն փակեք, երբ այն լցված կլինի 3/4- ով:

12. Ներարկիչների և ասեղների հետ աշխատելու անվտանգ տեխնիկա

ՄԻ՝ ՀՊՎԵՔ՝

- Ասեղին
- Ասեղի ծայրին
- Ասեղի գլխիկին

- Ներարկիչի քթիկին
- Մխոցին/մխոցի մանժետին:



ԿԱՐԵՎՈՐ Է. Եթե Դուք պատահական հպվել եք գործիքի նշված մասերից որևէ մեկին, գցեք ներարկիչն ասեղի հետ միասին ԱԱՏ-ի մեջ և վերցրեք նորը:

Ձեռքերով միայն կարելի է բռնել

- Ներարկիչի ցիլինդրը
- Մխոցի վերևի մասը

13. Պատվաստում կատարելու տեղի կազմակերպում՝ ասեղներից վնասվելու ռիսկի իջեցման համար:

- Պատվաստումներ իրականացնելու ժամանակ, բուժաշխատողը պետք է մանրակրկիտ կազմակերպի իր աշխատանքային տեղը:

- Պատվաստանյութով սառնարան-պայուսակը պետք է դրված լինի ստվերում:
- Պատվաստում կատարող բուժաշխատողը պետք է գտնվի երեխայի և բժշկական սուր գործիքների միջև:
- Պատվաստում կատարող բուժաշխատողը պետք է տեսնի օգտագործված գործիքների տեղադրման՝ ԱԱՏ-ի բացվածքը, ասեղների ծակոցներից խուսափելու համար:
- Պատահական ծակոցների ժամանակ ցուցաբերվում է անհետաձգելի բժշկական օգնություն:
- ✓ ձեռքերն արյունով կամ այլ կենսահեղուկներով աղտոտվելու դեպքում (առանց մաշկի վնասման) անհրաժեշտ է անհապաղ լվանալ հոսող ջրով և օճառով,
- ✓ եթե տեղի է ունեցել բուժաշխատողի մաշկի կամ լորձաթաղանթների վնասում և կենսահեղուկով աղտոտում անհրաժեշտ է մի քանի վայրկյան թողնել, որ վնասվածքը արյունահոսի, իսկ հետո լվանալ առատ հոսող ջրով կամ հոսող ջրի բացակայության դեպքում՝ ֆիզոլոգիական լուծույթով:
- ✓ այնուհետև անհրաժեշտ է լվանալ հոսող ջրով և օճառով:
- ✓ արգելվում է արյան արտահոսք ապահովելու նպատակով սեղմել կամ շփել վնասված մակերեսը, ինչպես նաև վերքից արտածծել արյունը,
- ✓ չի կարելի օգտագործել ուժեղ ազդող միջոցներ (սպիրտ, գունազրկող լուծույթներ, յոդ), քանի որ դրանք կարող են

գրգռել վերքային մակերեսը և առաջացնել լրացուցիչ արյունալցում:

14. Անվտանգ պատվաստումային տեխնիկայի բարելավման հասարակ միջոցներ


- Ներարկման պարագաները պատրաստելուց առաջ ձեռքերը լվացեք:
- Ձեռքի վրա եղած բոլոր չնչին վնասվածքները ծածկեք սպեղանիով /պլաստիքով/:
- Ներարկում կատարելիս ձեռքերը պահեք մաքուր:
- Օգտագործեք ինքնարգելափակվող կամ պատվաստանյութով ներլցված ներարկիչներ:
- Պատվաստանյութը լուծելու համար օգտագործեք միայն մանրէազերծ ներարկիչներ:
- Ներարկումը կատարեք հատուկ նախատեսված տեղում, որը բացառում է արյան կամ այլ կենսաբանական հեղուկների առկայությունը:
- Մի մշակեք շշիկների կափարիչները:
- Պատվաստանյութը հավաքեք շշիկից միայն մանրէազերծ ասեղով:
- Երբեք ասեղը մի թողեք շշիկի մեջ, պատվաստանյութն աղտոտելուց/կոնտամինացիայից խուսափելու համար:
- Պատվաստանյութերի պահպանման, վերականգման և կիրառման համար խստորեն հետևեք արտադրողի հրահանգին:

15. Աշխատանքի կազմակերպում

Ճիշտ բեռնավորեք սառնարան-պայուսակը՝

Սառնարան-պայուսակները ջերմամեկուսացված տարողություններ են պատվաստանյութերը և լուծիչները կարճաժամկետ պահելու համար, որոնց մեջ տեղադրվում են սառցային տարրեր, որոնք նախապես սառեցնելուց հետո բերվում են աշխատանքային վիճակի: Սառնարան-պայուսակում սառցային տարրերը տեղադրելուց առաջ համոզվեք, որ դրանք բերվել են համապատասխան վիճակի, այսինքն՝ սկսել են հալվել: Դա կկանխի, սառեցման նկատմամբ զգայուն պատվաստանյութերի սառչելը: Սառնարան-պայուսակի պենոպլաստե կամ պորոլոնե միջադիրը (լրացուցիչ կափարիչ) պենոպլաստի կամ պորոլոնե ոչ մեծ կտոր է՝ բացվածքներով (կտրվածքներով), որը դրվում է սառնարան-պայուսակի մեջ, սառցային տարրերի վրա: Պատվաստում կատարելու ժամանակ այդ միջադիրը կատարում է կոնտեյների ժամանակավոր կափարիչի դեր և ոչ միայն բացվածքներում տեղադրված պատվաստանյութերի սրվակները պահում է սառը վիճակում, այլև կայուն ձևով պաշտպանում է դրանք:

Սառնարան պայուսակներ և սառցային տարրեր



- Սեղանին դասավորեք.
 - ✓ բամբակե վիրախճուծներ,
 - ✓ 70°-ոց սպիրտի շիկ,
 - ✓ պատվաստանյութերը վերականգնելու և պատվաստման համար նախատեսված ներարկիչներ,
- Սեղանի տակ տեղավորեք տուփ կամ դույլ՝ ներարկիչի փաթեթը, ասեղի ծայրագիծը, շիկների գլխիկները նետելու համար:
- Պատվաստում իրականացնելիս սենյակում պետք է ներկա լինի միայն մեկ երեխա:
- Պատվաստանյութը պետք է ներարկիչի մեջ հավաքել միայն երեխայի՝ պատվաստմանը պատրաստ լինելուց հետո:

- Պատվաստման ընթացքում բուժաշխատողը պետք է գտնվի երեխայի և աշխատանքային սեղանի միջև:

16. Պատվաստանյութերի անվտանգություն

Ցանկացած պատվաստանյութ ներարկելուց առաջ պետք է ուսումնասիրեք պատվաստանյութի և լուծիչի սրվակները:

Համոզվեք, որ.

- պիտակները սոսնձված են սրվակներին, առանց պիտակների սրվակներ չի կարելի օգտագործել,
- վերցրել եք անհրաժեշտ պատվաստանյութը,
- եթե պատվաստանյութը պետք է վերականգնել, վերցրել եք այդ պատվաստանյութի համար ճիշտ լուծիչ,
- արդյոք պատվաստանյութի և լուծիչի պիտանելիության ժամկետը չի անցել, անցած ժամկետով պատրաստուկները չի կարելի օգտագործել, դրանք անհրաժեշտ է խոտանել:
- եթե պատվաստանյութերի սրվակներն ունեն զգայորոշիչներ, ստուգեք, չի փոխվել արդյոք դրանց գույնը:

Պատվաստանյութերի վերականգնումը

Վերականգնման ենթակա պատվաստանյութեր	Փոշի		Լուծիչ
ԲՅԺ	լինֆիլիզացված	սրվակ	հեղուկ, ստացվում է պատվաստանյութի հետ
Կարմրուկ-կարմրախտ	լինֆիլիզացված	շշիկ	հեղուկ, ստացվում է պատվաստանյութի հետ
Կարմրուկ-խոզուկ-կարմրախտ	լինֆիլիզացված	շշիկ	հեղուկ, ստացվում է պատվաստանյութի հետ

Հ Ի Շ Ե Ք

Մի՛ լուծեք պատվաստանյութը, քանի դեռ պատվաստման չի ներկայացել գոնե մեկ երեխա:

- Օգտագործեք միայն այն լուծիչները, որոնք առաքում են արտադրողները պատվաստանյութերի հետ միասին:
- Պատվաստանյութը վերականգնելու համար օգտագործեք շշիկում (սրվակում) եղած լուծիչի ամբողջ ծավալը:
- Դուք պետք է ոչնչացնեք վերականգնված պատվաստանյութերը լուծելուց 6 ժամ հետո կամ ըստ պատվաստանյութի հրահանգի և միշտ աշխատանքային օրվա վերջում:

- 1) պատվաստանյութը ներմուծեք միայն տվյալ պատվաստանյութին ուղեկցող հրահանգին համապատասխան,
- 2) յուրաքանչյուր պատվաստումային սեսիայի ավարտին հաշվարկեք օրվա ընթացքում ներարկված յուրաքանչյուր պատվաստանյութի դեղաչափերի ընդհանուր քանակը /սրվակների քանակը/,
- 3) երեխայի ցանկացած այցելության ժամանակ որոշեք, արդյոք պատվաստում պետք է կատարել,
- 4) եթե երեխան առաջին անգամ է եկել բժշկական կազմակերպություն, կատարեք այդ պահին նրան անհրաժեշտ բոլոր պատվաստումները,
- 5) անպայման լրացրեք պատվաստումների գրանցամատյանը, պատվաստումային քարտը և պատվաստումային վկայականը,
- 6) խստորեն պահպանեք պատվաստանյութերի կիրառման ցուցումները և հակացուցումները,
- 7) ճիշտ հաղորդակցվեք ծնողների հետ,
- 8) վերականգնեք պատվաստանյութերը միայն այն ժամանակ, երբ երեխան պատրաստ է պատվաստման,
- 9) ոչնչացրեք վերականգնված պատվաստանյութերը միշտ 6 ժամ հետո և աշխատանքային օրվա վերջում,

Պատվաստումային սեսիայի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն են՝

- Լվացարան
- Հեղուկ օճառ
- Չոր վիրախճուծներ
- Շշիկները բացելու համար հատուկ մետաղական դանակներ
- ԱՄՏ՝ օգտագործված պարագաների անվտանգ հավաքման համար
- Աղբի համար կոնտեյներ
- Գրանցամատյան
- Պատվաստումների օրական ծախսի հաշվառման թերթիկ
- Պատվաստումային քարտեր
- Գրիչներ, մատիտներ, թուղթ
- Սառնարան-պայուսակներ՝ սեսիայի ընթացքում պատվաստանյութի պահպանման համար
- Սառնարան - պայուսակի համար սառցային տարրեր:

17. Հաղորդակցություն ծնողների հետ

Շատ կարևոր է պատվաստումային սեսիայի ժամանակ ծնողների հետ խոսել այնպես, որ նրանք ճիշտ հասկանան Ձեզ.

1) Ի՞նչ հիվանդություններից է պաշտպանում տվյալ պատվաստանյութը:

- 2) Եթե երեխան ստանում է մեկ և ավել դեղաչափով կատարվող պատվաստանյութի մեկ դեղաչափ, բացատրեք ծնողներին մյուս դեղաչափերը ստանալու անհրաժեշտությունը, քանի որ միայն այդ դեպքում նրանց երեխան կլինի ամբողջապես պաշտպանված տվյալ հիվանդությունից: Օգտագործեք երեխայի պատվաստման քարտը՝ հաջորդ պատվաստման ամսաթիվը որոշելու համար:
- 3) Հետպատվաստումային ինչպիսի՞ անբարեհաջող դեպքեր /ՀԱԴ/ կարող են առաջանալ:
- 4) Ի՞նչ անել, եթե հետպատվաստումային շրջանում առաջացել են ռեակցիաներ:
- 5) Պարզաբանեք, արդյոք ծնողներն արդեն գիտեն այն ամենի մասին, ինչի մասին դուք իրենց պատմում եք: Աշխատեք օգտագործել նրանց համար հասկանալի բառեր:
- 6) Համոզվեք, որ ծնողները հասկանում են այն, ինչի մասին դուք նրանց պատմում եք: Նրանց տվեք հարցեր, որոնք պահանջում են ավելի մանրամասն պատասխան, քան ուղղակի «այո» կամ «ոչ»:
- 7) Պատվաստումային քարտի մեջ նշեք հաջորդ պատվաստման ամսաթիվը և հնարավորինս պարզ

ծնողներին բացատրեք, թե նրանք երեխային երբ պետք է բերեն հաջորդ պատվաստման համար:

- 8) Եթե ծնողները չեն կարող երեխային բերել նշանակած օրը, ապա ընտրեք այլ ամսաթիվ և ժամ:
- 9) Ծնողներին հիշեցրեք, որ նրանք բժշկական կազմակերպություն կամ արտագնա ընդունելության ժամանակ իրենց հետ բերեն պատվաստումային վկայականը:
- 10) Խորհուրդ տվեք ծնողներին դիմել բժշկի, եթե անբարեհաջող դրսևորումները տևեն 2 օրից ավելի:

18. Պատվաստման ցավը մեղմելու միջոցառումներ՝

Նախազգուշական միջոցառումներ պատվաստման պահին և հետո, ցավի մեղմացման համար.

- 1) Որպեսզի կատարեք մ/մ ներարկում մաշկը թեթևակի պահեք բութ մատի և ցուցամատի արանքում, ասեղը ներմուծեք արագ՝ 90° անկյան տակ,
- 2) Չի կարելի ներքաշել ներարկիչի մխոցը,
- 3) Ներարկման ժամանակ սեղմեք ներարկիչի մխոցը դանդաղ և վարժ՝ չշարժելով ներարկիչը,

- 4) Արագ և վարժ հեռացրեք ասեղը՝ նույն աստիճանի տակ, ինչպես մտցրել եք,
- 5) Եթե արյուն կա, ապա ներարկման տեղը սեղմեք մաքուր, չոր բամբակի խճուժով,
- 6) Խրախուսեք կերակրել կրծքով հենց պատվաստման ընթացքում, եթե սնվում է բնական,
- 7) Ներմուծեք պատվաստանյութն ըստ պատվաստանյութի ցավոտության ուժեղացման հերթականության,
- 8) Առաջինը ներմուծել ռոտավիրուսը,
- 9) Հետո պոլիոմիելիտի բերանային պատվաստումը,
- 10) Ներարկումային պատվաստումներն անհրաժեշտ է կատարել բերանային պատվաստումներից հետո,
- 11) Ներարկումային պատվաստումները կատարել միաժամանակ նույն օրը: Երեխային ավելի հեշտ է ցավն զգա մեկ անգամ, քան կրկնակի:

